ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Լևոն Անդրանիկի Քոչարյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Գյուղատնտեսությունը ՀՀ տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է, իսկ դրա կառավարումը՝ տնտեսվարման հրատապ խնդիրներից է, որոնց լուծման ընթացքում ՀՀ-ում երկար տարիներ փորձ է արվել ներդնել գյուղատնտեսության ապահովագրության ծրագրեր, այդ թվում՝ պիլոտային:

ՀՀ-ում գյուղատնտեսությունը մի շարք առումներով զբաղեցնում է առաջնային դիրք. պարենային անվտանգություն, սոցիալ-տնտեսական նշանակություն, զբաղվածության մակարդակ, ինչպես նաև ՀՆԱ-ում դրա էական տեսակարար կշիռ և այլն, և այդ առումով գյուղատնտեսության կառավարումը առաջնային ուշադրության կարիք ունի: Այստեղ են աճում Հայաստանի համար ազգային և մշակութային արժեք ներկայացնող մշակաբույսեր՝ ծիրան, խաղող, նուռ, և այլն: Ցորենի ցանքատարածությունները հանդիսանում են պատերազմի վտանգ ունեցող երկրների համար սովին դիմակայելու երաշխիք: Տնտեսության այդ ճյուղում, բացի ավանդական մեթոդներից, ներդրվում են թե՛ մշակաբույսերի աճեցման, և թե՛ անասնապահության ժամանակակից մեթոդներ: Մյուս կողմից, ապահովագրական շուկայի զարգացումը ինքնին կարևոր դեր ունի տնտեսական համակարգում: Նշվածը վկայում է, որ այս ոլորտի պաշտպանության, ֆինանսական կայունության և զարգացվածության բարձր մակարդակի ապահովումը պետական կարևորագույն գերխնդիրներից մեկն է:

Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության ներդրման վերաբերյալ իհարկե իրականացվել են հետազոտություններ, սակայն դրանք սակավաթիվ են և ոչ համապարփակ: 2017 թվականից սկսած KfW բանկի ֆինանսավորմամբ և պատվերով շվեյցարական MF Strategy Sarl ընկերությունը մշակել է նաև ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման ծրագիր:

Կատարվող աշխատանքները ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար կարելի է բավարար համարել՝ գյուղացուն պաշտպանվածություն և ծածկույթ ապահովելու առումով, սակայն, անհրաժեշտություն կա պատշաճ խորությամբ

հետազոտել և ուսումնասիրել, թե այսօր առաջարկվող մոտեցումները բավարարում են արդյոք գյուղատնտեսների և ապահովագրական ընկերությունների պահանջները, բացահայտել թերություններն ու բացերը, և առաջարկել բարելավման մեխանիզմներ:

Նշված կարևոր հիմնախնդիրների գիտական հետազոտման, լուծումների մշակման ու առաջադրման անհրաժեշտությունը ընդգծում է Լ. Քոչարյանի ատենախոսության թեմայի արդիականությունը և հետազոտության արդյունքների կիրառման կարևորությունը ՀՀ ապահովագրական համակարգի համար:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Հեղինակի կողմից, որպես ատենախոսության նպատակն է բերված ներկայումս ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսական պիլոտային ծրագրի թերությունները և խնդիրների բացահայտումը, ինչպես նաև համապատասխան կատարելագործման և բարելավման ուղիներ և մեթոդների առանձնացումը՝ առաջարկելով ավելի ճկուն մոդել, քան «արտադրական ծախսերի» հիման վրա իրականացվող մոդելն է:

Նշված նպատակին հասնելու համար ձևավորվել են ուսումնասիրության հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար արդեն իսկ կատարված աշխատանքները, վերլուծությունները և կիրառելիությունը:
2. Բացահայտել մինչ այժմ ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության բացակայության դրդապատճառները:
3. Բացահայտել ներկայումս ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի կիրառելիությունը, դրական և բացասական կողմերը, հիմնախնդիրները, գտնել այսօրվա ծրագրերից դուրս մնացած գյուղացիական տնտեսությունները, դրանց կարևորությունը, ինչպես նաև այդ տնտեսությունների համար մշակել համապարփակ ապահովագրության պրոդուկտներ:
4. Տեսականորեն հիմնավորել գյուղատնտեսության ապահովագրության առավել արդյունավետ մոդելի անհրաժեշտությունը՝ հիմնված հատուցման ամբողջականության վրա:
5. Գտնել գյուղատնտեսության ապահովագրության բաշխման, հաշվառման և այլ կազմակերպական գործընթացների արդյունավետ կիրառման մեխանիզմներ:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը շարադրված է 142 էջ ծավալով /առանց հավելվածի/, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, օգտագործված 101 անուն գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, գիտական արդյունքներն ու նորույթը, ստացված արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը, փորձարկումը, հրապարակումները ինչպես նաև հետազոտության տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ **«Գյուղատնտեսության ապահովագրության համակարգը և դերը»** գլխում հեղինակը ներկայացրել են ՀՀ-ում գյուղատնտեսության դերը, ծավալները, կարևորությունը, որոշ վիճակագրական տվյալներ: Ներկայացվել են գյուղատնտեսական ապահովագրության հիմնական տեսակները, անհրաժեշտության հիմնավորումը, կիրառելիությունը, հատուցվող ռիսկերը, միջազգայնորեն ընդունված մոդելները:

Հեղինակը ուսումնասիրել և ներկայացրել է գյուղատնտեսության ապահովագրության միջազգային փորձը, մասնավորապես Եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ռուսաստանում, Չինաստանում և այլ երկրներում:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսության ապահովագրության մոդելը և դրա ազդեցությունը ապահովագրական շուկայի վրա»** գլխում վերլուծվել են ապահովագրական շուկայի զարգացման և ՀՀ-ում ներդրված գյուղատնտեսական ապահովագրության մոտեցումները՝ հիմնված «արտադրական ծախսերի» վրա: Քննարկվել են այդ մոտեցման դրական և բացասական կողմերը, կիրառելիությունը ՀՀ-ում, դրա սոցիալական և տնտեսական ազդեցությունը և ներկայացվել են այլընտրանքային մոտեցումներ:

Հեղինակը կատարել է առաջարկվող բերքի ապահովագրության մոտեցման ներդրման հիմնավորում, դրա ազդեցության վերլուծություն ՀՀ ապահովագրական շուկայի վրա, փորձել է կանխատեսել նաև 5-ամյա ցուցանիշները: Արդյունքում ձևավորել են որպես գիտական նորույթ ներկայացվող 1-ին և 4-րդ կետերը՝ ներկայացվել է «Բերքի ապահովագրության» մոդելը, քննարկվել է դրա առավելությունները «արտադրական ծախսերի» մոդելի նկատմամբ, առաջադրվել է տվյալ մոդելի սակագնի հաշվարկման մոտեցում, ինչպես նաև նախանշվել են ներդրման փուլերը:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար բաշխման (վաճառքների) եղանակները, դրանց հնարավորությունները և ընդգրկվածությունը»** գլխում հետազոտվել են ՀՀ-ում առկա ջերմոցային տնտեսությունները, դրանց կառուցվածքը, ռիսկերը, և առկա ռիսկերի ապահովագրության հնարավորությունները, ինչպես նաև զարգացվել է

ապահովագրության բարելավման հարցում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման գաղափարը:

Հեղինակը փորձել է բացահայտել ջերմոցային տնտեսությունների անուղղակի կապը գյուղատնտեսության ապահովագրության հետ և առաջարկել է ներդնել «Բիզնեսի ընդհատման» ապահովագրության մոտեցում, որը ներկայացվել է որպես գիտական նորույթի երկրորդ կետ: Այնուհետև, վերլուծելով գյուղատնտեսական ապահովագրության նպատակով անօդաչու թռչող սարքերի կիրառման գաղափարը և փորձը վնասների գնահատման, չափագրումների և բերքատվության կանխատեսումների համար, ձևավորվել և որպես իր գիտական արդյունք է ներկայացրել ատենախոսության նորույթի երրորդ և հինգերորդ կետերը:

«Եզրակացություն» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական եզրակացությունները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Հետազոտության օբյեկտն է ներկայացված ապահովագրական ընկերությունների, գյուղացիների, միջնորդների և կարգավորող մարմնի՝ ՀՀ Կենտրոնական Բանկի, ի դեմս Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալության միջև փոխհարաբերությունները և դրանցից բխող հետևանքները: Որպես հետազոտության առարկա են ընտրվել գյուղատնտեսական ապահովագրության ոլորտը, իրականացման ձևերը ու կազմակերպման առանձնահատկությունները ՀՀ-ում:

Վերլուծության իրականացման ժամանակ օգտագործվել են գյուղատնտեսության ապահովագրության համակարգերի ներդրման համար հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատություններ, գիտական հրապարակումներ, աշխատանքային փաստաթղթեր, միկրո և մակրոտնտեսական մեկնաբանումներ, ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսության ապահովագրության համակարգի նորմատիվ ակտեր, վերլուծական նյութեր:

Հետազոտության տեղեկատվական հիմք են հանդիսացել նաև արտասահմանյան որոշ երկրներում գյուղատնտեսության ապահովագրությունը կարգավորող իրավական ակտեր, ինչպես նաև ՀՀ-ում գյուղատնտեսական ցուցանիշների առավել մանրամասն վիճակագրություն՝ համաձայն ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության պաշտոնական տվյալների:

Ատենախոսությունում կիրառվել են տնտեսամաթեմատիկական, վիճակագրական, գրաֆիկական, սխեմատիկ և վերլուծության այլ մեթոդներ:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա հեղինակը ստացել է տեսական և գործնական նշանակության մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ներկայացրել է հետևյալները.

1. Առաջարկվել է ՀՀ-ում ներդնել գյուղատնտեսության ապահովագրության՝ «**Բերքի ապահովագրության**» վրա հիմնված մոդելը փուլային եղանակով, ի լրումն «Արտադրական ծախսերի» մոդելի:
2. Առաջարկվել է ներդնել Ջերմոցային տնտեսությունների ապահովագրության մեխանիզմ՝ գույքի ապահովագրության շրջանակներում «Բիզնեսի Ընդհատում» ռիսկի ապահովագրության ծածկույթներով:
3. Առաջարկվել է գյուղատնտեսության ապահովագրության ներդրման հետ զուգահեռ ՀՀ-ում ստեղծել և խթանել գյուղատնտեսական կոոպերատիվներ՝ Բաժնետիրական Ընկերության իրավական կարգավիճակով և կոոպերատիվի մասնակիցների բաժնեմասերի առկայությամբ:
4. Առաջարկվել է Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության ներկայիս «Արտադրական ծախսերի» հիման վրա գործող մոդելի արդյունավետության բարձրացման նպատակով կատարել կոնկրետ գործավարման և այլ ծախսերի (սակագնի բեռնվածության) օպտիմալացում, ինչպես ապահովագրության մեջ, այնպես էլ վերաապահովագրության փոխանցվող հատվածի տեսակարար կշռի մեջ:
5. Առաջարկվել է ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության բաշխումը իրականացնել նոր ուղղություններով, այդ թվում՝ օգտագործել Անօդաչու թռչող սարքերի հնարավորությունները ռիսկերի և վնասների գնահատման համար:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Ատենախոսությունում ընդհանուր առմամբ, ինչպես նաև դրա արդյունքներում հիմնականում գերակշռում են ուսումնասիրվող ոլորտի գործնական, կիրառական, առկա փորձի գնահատման վերաբերյալ մոտեցումներն ու եզրահանգումները: Մեր կարծիքով, ատենախոսության գիտականությունը կշահեր, եթե ներկայացված լիներ ֆինանսական հարաբերությունների գնահատման տնտեսագիտական, տեսամեթոդական վերլուծություն: Որքան էլ դա պայմանավորենք թեմայի առանձնահատկություններով, ատենախոսությունը զգալիորեն կշահեր, եթե ներկայացված առաջարկությունները

գնահատվեին ոչ թե ինքնանպատակ, այսինքն՝ միայն գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրերի իրականացման տեսակետից, այլ նաև փորձ կատարվեր ավելի խորքային վերլուծել ազդեցությունը տնտեսության վրա՝ մակրո և միկրո մակարդակներում՝ շեշտադրումներ կատարելով նաև ֆինանսական շուկայի մասնակիցների և հիմնականում ապահովագրական ընկերությունների ցուցանիշների վրա:

2. Նույնը վերաբերում է նաև օգտագործված գրականության ցանկում որպես մասնագիտական նշված թվով 72 աղբյուրներին, որոնց շարքում գիտական մասնագիտական գրականությունը խիստ սակավ է և գերակշռում են գործնական կիրառական վերլուծություններ և դրանց վերաբերյալ հրապարակումներ:

3. Անդրադառնալով, որպես գիտական նորույթ նշված կետերին, նախ նշենք, որ դրանք ցանկալի կլիներ խմբագրել և ներկայացնել ոչ թե առաջարկվող կիրառական մոտեցումների, այլ հեղինակի կողմից գիտական հետազոտությամբ մշակված և ներկայացված արդյունքների ձևով: Մասնավորապես՝ որպես գիտական նորույթի 5-րդ կետ՝ հեղինակը առաջարկում է անօդաչու թռչող սարքերի կիրառությունը ՀՀ գյուղատնտեսական ապահովագրության ոլորտում: Նորույթի հիմնավորումը հեղինակը կառուցում է այն տրամաբանությամբ, որ աշխարհի տարբեր երկրներում դրանք կիրառվում են և դրական են ազդում մի շարք ցուցանիշների վրա, և որպես հետևանք, առաջարկում է դրանք կիրառել ՀՀ-ում: Որքան էլ դրանք օգտակար լինեն ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության համար ընդհանրապես, կամ հեղինակի ուսումնասիրության նպատակ հանդիսացող պիլոտային ծրագրերի իրականացման համար՝ մասնավորապես, այդ առաջարկը որպես գիտական նորույթ ներկայացնելը, մեր կարծիքով, վիճահարույց կարող է լինել և լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

4. Տարբեր երկրների /Գերմանիա, Ուկրաինա, ԱՄԷ, Ճապոնիա, ԱՄՆ, Նոր Զելանդիա/ փորձի ուսումնասիրման և ներկայացման համար հեղինակը որպես տեղեկատվական աղբյուր է նշում ռուսալեզու համացանցային կայք /agroinsurance.com/, մինչդեռ, մեր կարծիքով, ավելի նպատակահարմար կլիներ իրականացնել սեփական հետազոտություն տվյալ երկրների հեղինակների հրապարակումների կամ պաշտոնական վիճակագրության տվյալների հիմքով, ռուսական նշված կայքի վերլուծության վրա հիմնվելու փոխարեն:

5. Որպես գիտական նորույթ ներկայացնող 3-րդ կետում հեղինակը առաջարկում է խթանել գյուղատնտեսական կոոպերատիվները, միաժամանակ բաժնետիրական ընկերությունների իրավական կարգավիճակով: Մեր կարծիքով, լրացուցիչ հիմնավորման կարիք կա նշված տարբեր իրավակազմակերպչական տեսակների

դեպքում՝ թե՞ իրավական կարգավորման, և թե՞ հիմնականում տնտեսական շահերի ու կառավարման մոտեցումների հակասությունները պարզաբանելու իմաստով:

6. Ատենախոսության 57-րդ կետում ատենախոսը աղյուսակի ձևով ներկայացնում է գյուղատնտեսական ապահովագրության և շուկայի կանխատեսումներ մինչև 2023թ., սակայն ցուցանիշների վերլուծությունից պարզվում է, որ կանխատեսումները կատարված են գյուղատնտեսական ապահովագրության ներկայիս մեթոդական կարգավորման պայմանների հիման վրա, մինչդեռ ավելի արժեքավոր կլիներ փորձ կատարել բերված ցուցանիշները կանխատեսել հեղինակի կողմից մշակված առաջարկությունները կիրառելու արդյունքներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողություններով, ինչպես նաև ատենախոսության դրական արժանիքներով և գիտական մակարդակով հանդերձ՝ **Լևոն Անդրանիկի Քոչարյանի «Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը** կարելի է որակել, որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրերի իրականացման վերաբերյալ տեսական և գործնական խնդիրներ, վերլուծության ու հետազոտության արդյունքում առաջարկված են գիտական նորույթ պարունակող հեղինակային մոտեցումներ:

Ատենախոսությունը ունի դրական արժանիքներ, նաև կատարված է ինքնուրույն հետազոտություն, վերլուծական աշխատանք: Այն հիմնականում աչքի է ընկնում իր գործնական, կիրառական արժեքով: Ուսումնասիրված են ՀՀ և այլ երկրների գյուղատնտեսական ապահովագրության զարգացման մոտեցումներ, ներկայացվել են վիճակագրական ցուցանիշներ: Ընդհանուր առմամբ այն համապատասխանում է թեկնածուական ատենախոսությունների նկատմամբ պահանջներին:

Հետազոտության արդյունքները քննարկված են Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանում, իսկ հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած թվով 6 (վեց) գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատակարման պահին ընդունելի հանդեսներում ու ժողովածուներում, ընդ որում բոլոր հոդվածները հրատարակվել են մեկ տարվա՝ 2019թ. ընթացքում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և համապատասխանում է ատենախոսության բովանդակության արտացոլելով դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, նույն կանոնակարգի 22-րդ կետի 4-րդ պարբերության սահմանված պահանջներին համաձայն գտնում ենք, որ **Լևոն Անդրանիկի Քոչարյանի «Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը** համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, այն կարող ենք որակել, որպես ՀՀ-ում **գյուղատնտեսության ապահովագրության բարելավմանն** ու զարգացման **ուղղված** կիրառական հիմնախնդիրների լուծմանն ուղղված հետազոտությամբ և վերլուծությամբ գիտականորեն հիմնավորված տնտեսական մշակում, որի պաշտպանության արդյունքում հեղինակին կարող է շնորհվել **Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ա. Ա. Հակոբյան**

07 փետրվարի 2020թ.

Ա.Ա.Հակոբյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ
ՀՊՏՀ-ի գիտական քարտուղար **Ն. Հ. Գարբինյան**

07 փետրվարի 2020թ.